

ԵՐԿԼԵՉՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԱՐԴՈՒ ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Ե. Ռ. ՀԱՅՈՒՐԱՆ

Երկիր մոլորակի վրա մարդկության գոյությունը, մարդկային մտածողությունը, պատմա-հասարակական զարգացումը անխզելիորեն կապված են լեզվի հետ, և յուրաքանչյուր ժողովրդի մշակույթի բազմակողմանի, խորը ուսումնասիրությունը բերում է այն համոզման, որ ազգային առանձնահատկությունները ամենասերտ առնչություններն ունեն տրվյալ ժողովրդի լեզվամտածողության հետ, և դրանց հիմքում լեզուն է ընկած:

Լինելով պատմահասարակական երկարտև զարգացման արդյունք՝ լեզուն յուրաքանչյուր սերունդ յուրացնում ու վերարտադրում է՝ իր ազդեցությունը թողնելով անձի սոցիալականացման վրա:

Փաստորեն լեզուն և՛ հասարակական, և՛ պատմական երևույթ է. հետաքրքրական է նրա դիտարկումը սոցիալական հոգեբանության մեջ այն առումով, որ լեզուն հիմնարար ներգործություն է ունենում անձի թե՛ մտածողության և թե՛ վարքագծի վրա, հետևաբար այս բնագավառում երկլեզվության հիմնահարցը առանցքային տեղ է գրավում, քանի որ հասարակական հարափոփոխ երևույթները, հասարակության մեջ ընկերային-տնտեսական, գիտական, մշակութային և այլ հարաբերությունները ի վերջո կարող են հանգեցնել երկլեզվության: Այստեղ են վերաբեռվորվում հիմնահարցի վերաբերյալ տարբեր գիտությունների և հատկապես հոգեբանության ոլորտում ձեռք բերված բոլոր տվյալները:

Երկլեզվության հիմնահարցը արդիական է աշխարհի շատ ու շատ երկրներում հատկապես այն առումով, որ գաղութատիրությունը, գաղութների առաջացումը սահմանային (մարզինալ) կարգավիճակում գտնվող ժողովրդին գրկում է ազգային արժեքներին հարողակցվելուց, պարտադրում իշխողի լեզուն:

Երկլեզվության ուսումնասիրության նպատակն է բացահայտել փոխշփվող լեզվահամակարգերի տարբերությունները, որոնք դժվարացնում են երկու լեզուների միաժամանակյա տիրապետումն ու օգտագործումը, կանխատեսել փոխներթափանցման հնարավոր դրսևորումները և վեր հանել վարքի այն յուրահատկությունները, որոնք բխում են տվյալ անձի երկլեզվությունից: Ուստի հիմնահարցի բոլոր ուսումնասիրությունները վերջիվերջո հոգեբանական բնույթ են ստանում:

Երկլեզու խմբերում լեզվական համակարգերը փոխներթափանցում են, բնականաբար երկլեզվակրի մտածողության ու լեզվի կապը ավելի բարդ է:

Հիմնահարցի՝ հոգեբանական տեսանկյունից ուսումնասիրության նպատակն է պարզել լեզուների փոխներթափանցման երևույթները մեկ անձի մեջ, դրա դրական ու բացասական ազդեցությունները անձի սոցիալականացման գործընթացում:

Տարբեր մարդիկ միանգամայն տարբեր ձևերով են կարողանում իրականացնել փոխներթափանցման գործընթացը՝ ինչպես չգիտակցված, այնպես էլ գիտակցված: Եթե մեկ լեզվի յուրացումը անձի մտածողության ձևավորման, աշխարհընկալման առաջնային ու ամենահամապարփակ միջոցն է, ապա ամեն մի նոր լեզվի յուրացումը անձի ձևավորման ու սոցիալականացման մի ենթափուլ է, որի դիտարկումը հնարավոր է միայն հոգեբանական հետազոտությունների միջոցով:

Երկլեզվության հիմնահարցը արդիական է նաև մեր ժողովրդի համար: Նրա մեծագույն մասը ապրում է արտերկրում, և շատերի համար, ցավոք, մայրենի լեզուն է դարձել երկրորդ լեզու: Իսկ բուն հանրապետությունում հիմնահարցը սրվել է վերջին տարիների բուն իրադարձությունների հետ կապված: Ուստի հրատապ խնդիր է երկլեզվության սոցիալ-հոգեբանական կողմերի, անձի սոցիալականացման ու այդ երևույթի հետևանքով առաջացող ներանձնային կոնֆլիկտների օրինակով դրա ազդեցության բնութագիրը ներկայացնելը: Այս առումով ևս կարևորվում է երկլեզվակիրների հոգեբանության ուսումնասիրումն ու արդյունքների հիման վրա մարդու անձնավորության ձևավորման ու հասունացման գործընթացում երկլեզվության ազդեցության, երկլեզվակիրների շրջանում տիպական

Քայլերի ու հայտնիների ձևավորման հնարավորության, նոր սերնդի կողմից ազգային արժեքների յուրացման, երկլեզվության նկատմամբ անձանց հանդուրժողականության հիմնահարցերի ուսումնասիրությունը:

Աճը կամ թե ակամա իր կյանքի յուրաքանչյուր փուլում հայտնվում է տարբեր սոցիալական խմբերում, խմբեր, որոնք միավորվել են ըստ որոշակի ընդհանուր առանձնահատկությունների և որպես մեկ միասնություն իրականացնում են շփման ու գործունեության գործընթացներ, հետապնդում ընդհանուր նպատակներ ու խնդիրներ, որոնց անդամը դառնալով և միաժամանակ նրա գործունեությանը մասնակից լինելով՝ յուրաքանչյուրը մասնակցում է հասարակական կյանքին, իրականացնում իր առջև դրված նպատակներն ու խընդիրները¹:

Երկլեզվակիրներից ևս կարելի է տարբերակել ոչ միայն ըստ սոցիալական, մասնագիտական, կրթական և այլ խմբերի, այլ նաև ըստ նրանց բնորոշ հաղորդակցական, նշանագրային խմբերի՝ իրենց թեզաուրոսով²: Դրանք այն խմբերն են, որոնք ունեն ընդհանուր թեզաուրոս (տվյալ լեզվական համակարգերի շրջանակներում կարողությունների, հմտությունների որոշակի համալիր), հետևաբար, երկլեզվակիրը կոժվարանա ընտրել իր համար ռեֆերենտային խումբը, խումբ, որի հետ տվյալ անձը հոգեբանական նույնացում է ապրում, և որի հայացքներն ու այդ հայացքների կողմերը տվյալ անձի սոցիալականացման առավել նշանակալի գործոններն են:

Երկու լեզվահամակարգերի փոխազդեցության հետևանքով անպատճառ շեղումներ են տեղի ունենում որևէ լեզվի չափանիշներից, երևույթ, որը «փոխներթափանցում» անվանում է կրում, երբ շատ հաճախ գործառնապես առաջին լեզվի բառերը օգտագործվում են երկրորդ լեզվում: Մի լեզվի բառերի այդպիսի չարդարացյաժ զրսւտրումները մյուս լեզվում երևան են գալիս թերևս լեզվի նկատմամբ անփույթ վերաբերմունքի, լեզվական ցածր մշակույթի, ինչպես նաև երկրորդ լեզուն վատ իմանալու հետևանքով: Այս կարգի լեզվական սխալները փոխազդող լեզուներում միավորվում են կեղծ փոխներթափանցում անվան տակ («կվպահիհտերֆերենցիա»): Վերջինս չի շոշափում գիտակցության ավելի խոր շերտեր: Այդպիսի կեղծ փոխներթափանցումը կարելի է վերացնել ինքնակրթությամբ և տվյալ լեզվով ազատ տիրապետող անհատների հետ շփվելու շնորհիվ:

Սակայն մեզ հետաքրքրում է ոչ միայն կեղծ, այլ նաև իրական փոխներթափանցումը, որը շատ դժվար և համարյա թե անհնար է վերացնել, պայմանավորված լեզվի իմացության մակարդակով, քանի որ այդպիսի փոխներթափանցումը շոշափում է գիտակցության ավելի լայն շերտեր՝ հանգեցնելով իմաստային շեղումների, իսկ աստիճանաբար իրականացած լեզվական շեղումները կարելի է բնորոշել որպես անցում մի լեզվից մյուսին, որի հաճախականության մեծացման հետ մի լեզուն աստիճանաբար գերակշռող է դառնում կամ էլ վերջնականապես փոխարինում մյուսին: Այսպիսով, յուրացվող ու գործածվող երկու լեզուները, մտնելով փոխազդեցության մեջ, կարծես թե մրցակցում են մեկ անհատի մեջ. նշանակում է՝ գործածության մեջ են մտնում իրականության երկու ընկալում:

Նման յուրօրինակ վարքաձևերը, որոնք արդյունք են այլ լեզուների ազդեցության, վերջին հաշվով կարող են անցողիկ ձևեր լինել կամ մնալ որպես միալեզու կոլեկտիվի ոչ էական երևույթ: Սակայն հասարակության մշակութային բարենպաստ պայմաններում այդ տարատեսակները կարող են վերածվել ինքնուրույն, նոր, կայուն լեզվի: Այդպիսին է, օրինակ, ֆրանսերենի այն ճյուղի պատմությունը, որն աֆրիկյան լեզուների խորը ազդեցությամբ վերածվել է ժամանակակից կարիբյան-քրեոլյան տարատեսակի:

Լեզվական վարքի ուսումնասիրությունը կապված է երկլեզվակիր կենսագրության հետ: Եթե հաղորդակցումը իրականանում է մարդկային մեծ խմբերի շրջանակներում, ապա առանձին կողմերի լեզվական վարքի անհատական յուրահատկություններ փոխադարձաբար իրար չեզոքացնում են, իրենց տեղը զիջելով ամբողջ խմբին բնորոշ, սոցիալապես պայմանավորված լեզվական հմտություններին: Ժատ գործոններ, որոնք լեզվին գերակայության կարգավիճակ են ապահովում, հաղորդակցման ընթացքում մեծ դեր ունեն, նպաստում են հասարակական առաջխաղացմանը: Այդ գործոնները մարդուն պարտադրում է շրջապատող միջավայրը: Նույնիսկ լեզուն սովորելու ձևը, սովորողի տարիքը, գրագիտության աստիճանը հաճախ որոշվում է հասարակության, այլ ոչ թե անհատի կողմից: Մի հասարակության մեջ երկլեզվությունը կարող է կասկածելի թվալ, մյուսում հարգանքի արժանանալ, մեկում անցումը մի լեզվից մյուսին թույլատրելի է, մյուսում՝ պախարակելի:

¹ Տե՛ս Ա. Ա. Նպաշչյան, Աճ, խմբային սոցիալականացում և հոգեբանական աղապատացիա, Երևան, 1985 թ.:

² Տե՛ս Т. Дридае, Язык и социальная психология. М., 1990:

Այդ իսկ պատճառով երկլեզվակիրներն իրենց վարքը կարգավորում են համապատասխան այն խմբի արժեքներին, որոնց անդամ են իրենք:

Մանուկ հասակում լեզուն երկլեզվակրի գիտակցության մեջ ամրագրվելու, իր ուրույն տեղն ունենալու ավելի մեծ հավանականություն ունի: Թեև երկլեզվակիրը կարող է հավասարապես տիրապետել երկու լեզվին էլ, սակայն հաղորդակցման ժամանակ մարդն անընդհատ գերապատվությունը տալիս է մեկին: Այդպիսի կիրառությունը, փաստորեն, տվյալ լեզվին գերիշխողի կարգավիճակ է ապահովում:

Որոշակի սոցիալական պայմաններում այս կամ այն լեզվի տիրապետումը, ելնելով սոցիալական կարիքներից, մարդու համար կարող է դառնալ ոչ միայն կարևոր, այլ նաև հասարակության մեջ նրա առաջնադասման համար նպաստավոր: Այս պայմանների ազդեցության տակ մարդը ձգտում է ոչ միայն սովորել տվյալ լեզուն, այլ նաև լավ տիրապետել: Նման երևույթը նույնպես լեզվի գերակայության պատճառ կարող է դառնալ:

Երկլեզվության հիմնախնդրի ուսումնասիրության համար հետաքրքրական է այն հարցը, թե ինչպես են արտացոլվում ու փոխներգործում տարբեր խմբերի դիրքորոշումներն ու արժեքները, ինչպես նաև ձևավորվում ամբողջական աշխարհայացք, վարքաձևեր և այլն: Եվ եթե զոհն երկու խմբեր, որոնց պատկանում է երկլեզվակիրը, ունեն տարբեր նպատակներ, վարքի ընդունված տարբեր ճորձեր, հոգեբանական օբյեկտ հանդիսացող սոցիալական տարբեր տիպերի պատկանող անձինք, ապա նա կարող է ունենալ ներհոգեկան կոնֆլիկտներ, որոնք կարող են լինել քավականին տևական ու խորը հատկապես այն դեպքում, եթե անձը ցանկանում է միաժամանակ մնալ որպես երկու խմբերի լիարժեք անդամ: Այս հանգամանքը, անշուշտ, իր ազդեցությունն է թողնում անձի քաղվածքերու ու քաղմաքովանդակ ես-պատկերների ձևավորման ու հատուցացման, մտածողության ռասկի ու մտածական գործընթացների վրա: Մեր կատարած հետազոտության շրջանակը լայն էր, որտեղ ընդգրկվել էին մոսկվաբնակ ու հայաստանաբնակ հայերի խմբեր:

Մոսկվաբնակ հայերը դիտվեցին որպես սահմանային (մարգինալ) կարգավիճակում գտնվող անձինք, քանի որ նրանք միաժամանակ հայտնվել են սոցիալական (նաև՝ լեզվական, նշանագրային) տարբեր խմբերում: Այս կարգավիճակում հայտնված անձինք սուր կերպով գզում են այդ խմբերի միջև եղած միմյանց չհամընկնող, հաճախ նույնիսկ հակադրվող արժեքների, վարքաձևերի տարբերությունները և ստիպված են լինում անընդհատ ընտրություն կատարել երկու տարբեր լեզուների, մշակույթների, դիրքորոշումների, վարքաձևերի միջև, երևույթ, որը հանգեցնում է այդ անձանց շրջանում ոչ հարմարվողական վարքաձևերի առկայությունը և դժվարացնում ու քարդացնում անձի սոցիալ-հոգեբանական հարմարման և սոցիալականացման գործընթացը: Նույնիսկ ավելին, հարմարվելու փորձերում նրանց կրած չափազանց մեծ դժվարությունները պայմանավորվում են անձի սոցիալականացման ու տվյալ սոցիալական միջավայրի լեզվի, դիրքորոշումների, մշակույթի, ընդունված վարքաձևերի տարբերություններով:

Մոսկվաբնակ հայերի շրջանում կատարված հետազոտությունների արդյունքները հնարավորություն ընձեռեցին մեզ տարբերակելու նրանց շրջանում առկա անձանց էթնիկական դիրքորոշումների էթնոմետ (դիրքորոշում՝ միտված դեպի ազգայինը, հենվելով ազգային լեզվի, սովորույթների, ավանդույթների, կրոնի ու ազգային մյուս արժեքների մասին անձի ունեցած պատկերացումների վրա) և էթնոմետ (դիրքորոշում, որը մերժում է ազգայինը. ավանդականը, մայրենի լեզուն, կենցաղը, վարքն ու քարքը, սովորույթներն ու ավանդույթները և այլն) տեսակները: Դիրքորոշումների այս տեսակները անձանց ներքին ու ենթագիտակցական պատրաստականությունն են՝ պահպանելու կամ մերժելու ազգայինը, էթնիկականը, զուտ ավանդականը:

Երկլեզվակիրների դիրքորոշումների այս տեսակները, նախորդելով անձանց գործողություններին և ուղղորդելով նրանց վարքաձևերը, նպաստում կամ խաթարում են ազգային հոգեկերտվածքի ու ինքնագիտակցության տարբերի ամրապնդմանը, անձի հատուցացման, ձևավորման, սոցիալ-հոգեբանական ու հարմարման գործընթացում և մնում որպես անձի ես-պատկերները, հատկապես էթնիկական ես-ը ձևավորող վճռորոշ գործոններ: Միաժամանակ անհրաժեշտ է նաև նշել, որ անհամեմատ շատ են ու քաղվածակ ազգային լեզուները, ավանդույթները, սովորույթները, կենցաղը, վարքն ու քարքը, որոնք բնորոշ են յուրաքանչյուր ազգի և պարտադիր յուրաքանչյուր անհատի լիարժեք սոցիալականացման համար: Վերջիններիս կայունությունն ու երկարատևությունը նպաստել է ազգերի, ժողովուրդների ապրելակերպի համեմատաբար կայուն վիճակին: Հետազոտության արդյունքները վկայում են, որ զուտ ազգային ավանդույթներից ու սովորույթներից հետո են կանգնած այն անձինք, ովքեր ունեցել են ոչ մայրենի, տվյալ դեպքում՝ ռուսական կրթություն, և որպես կանոն մնան անձանց մեծամասնությանը բնորոշ է էթնոմետ դիրքորոշում ու ընդհակառակը, երևույթ, որը վերստին հաստատեց այն, որ ազգային լեզվի յուրացումն ու ըստ ամենայնի կիրառումը նպաստում է ազգային մտածողության, ազգային ինքնագի-

տակցության ձևավորմանը, մշակույթի յուրացմանը, ավանդույթների, սովորույթների պահպանմանն ու փոխանցմանը, քանի որ տարբեր սոցիալական խմբերի, բարոյական հոդվերի, դիրքորոշումների, վարքաձևերի նույնացման ընթացքում անձը ունենում է խոր ներհոգեկան կոնֆլիկտներ, դժվարանալով ինտեգրել նույնիսկ իր ես-պատկերները:

Տեղաբնակ, դպրոցական 15—16 տարեկան աշակերտների շրջանում կատարված հետազոտությունների ընթացքում, հոգեբանական թեստերի, հարցաթերթերի ու կլինիկական գրույցների օգնությամբ, դիտարկել ենք երկլեզվակիրների վարքը, նրանց անձնական փորձը: Կատարված ուսումնասիրությունների արդյունքների ու դպրոցական առարկաներից ըստացած հանրագումարային գնահատականների հարաբերակցության և վերջնական ամփոփման արդյունքները հանգեցրին հետևյալ եզրակացությանը. երկլեզվության նկատմամբ դրական դիրքորոշում ունեցող աշակերտները աչքի են ընկնում ավելի բարձր ուսումնական ու սոցիալական հաջողություններով, համեմատած այն աշակերտների հետ, որոնք երկլեզվության նկատմամբ ունեն բացասական դիրքորոշում, ընդ որում, ընդգրկված էին բոլոր այն աշակերտները, որոնք իրենց երկլեզվակիրներ էին համարում: Այդչափ լեզվի/իմացությունը մեր քննորոշմամբ համընկնում է արդյունավետ (պրոդուկտիվ) երկլեզվության չափանիշներին*։ Միանգամայն նոր՝ սոցիալ-հոգեբանական մոտեցում հանդես բերելով տղրված հիմնախնդրին և էլենելով անձի սոցիալականացման, սոցիալ-հոգեբանական հարմարման ու անձի սահմանային կարգավիճակին տեսությունների դիրքերից, կարողացել ենք հիմնավորել այն միտքը, որ երկլեզվության նկատմամբ անձի դրական դիրքորոշումն է հանգեցնում անձի մտածողության խորացմանը, մտածական գործընթացների բարելավմանը, ես-պատկերների, հատկապես էթնիկական ես-պատկերի ձևավորմանն ու հատունացմանը և ընդհակառակը:

Այս ամենի հետ մեկտեղ առաջ ենք քաշում երկլեզվության խնդրում անձանց հանդուրժողականության (անձի համբերությունը ֆրուստրացիայի վիճակի մեջ չընկնելու ու պաշտպանական մեխանիզմների օգնությամբ չլիմելու ընդունակությունը) հիմնահարցը, որի հակառակ երևույթը անձի անհանդուրժողականությունն է: Վերջինս դրսևորվում է հատկապես այն ժամանակ, երբ որևէ երևույթ հեռանում է տվյալ անձի համար ընդունելի դարձած սահմաններից. դառնում է անհանդուրժելի: Տվյալ դեպքում հնարավոր է, որ անձը գիտակցում է իր կոնֆլիկտը և ֆրուստրացիա է ապրում, բայց հետո, պաշտպանական մեխանիզմներ գործադրելով, հասնում է ազատ վիճակի:

Սա, իհարկե, դեռևս կոնֆլիկտի լուծում չէ, ոչ էլ երկլեզվության խնդրում հանդուրժողականության ձեռքբերում, այլ պարզապես հոգեբանական հարմարում, որը պատճառ կարող է հանդիսանալ անձի հոգեկանում նոր կոնֆլիկտների:

Անձի սոցիալ-հոգեբանական հարմարման տեսության համար հատուկ հետաքրքրություն են ներկայացնում այն դեպքերը, երբ անձի մեջ առաջ են գալիս հակասական և նույնիսկ կոնֆլիկտային հարաբերություններ:

Այսպիսով, անձի դիրքորոշումների լույսի ներքո մենք փորձեցինք զարգացնել անձի ես-պատկերների, հատկապես էթնիկական ես-պատկերների ձևավորման, զարգացման ու հատունացման խնդիրները, հաշվի առնելով անձի սոցիալականացման, սահմանային կարգավիճակի ու անձի սոցիալ-հոգեբանական հարմարման օրինաչափությունները:

И. Р. АКОШИИ — Двухязычие и формирование личности. — Выдвинутые в статье вопросы посвящены социально-психологическим аспектам двухязычия личности, где особое внимание уделено социализации билингва, его Я-концепция, особенно проблемам формирования и созревания этнической Я-концепции. Обсуждаются также вопросы социально-психологической адаптации личности в процессе решения межличностных конфликтов, вытекающих из двухязычия.

* Արդյունավետ (պրոդուկտիվ) երկլեզվության էությունը ոչ միայն տեքստի իմաստը հասկանալն ու վերարտադրելն է, այլև երկրորդ լեզվով ինքնուրույն նախադասություններ կազմելու կարողությունը, անկախ այն հանգամանքից, նախադասությունները խստորեն համապատասխանում են ուսուցանվող լեզվի նորմերին, թե ոչ: